ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» սեպտեմբերի 2015թ. N----- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ա» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևանի քաղաքային համայնքում տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 536-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 90-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «ավարտված շինարարության շահագործումը» բառերը փոխարինել «շինարարության ավարտական ակտի ձևակերպման» բառերով:

2) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1) ենթակետով.

«1.1) շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ. 101-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. 501-ից 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

դ. 1501 քառակուսի մետր և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 150000 դրամ»:

3) որոշման 2-րդ կետի «սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի ա), բ), գ), դ) պարբերությունների» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև 1.1) ենթակետի ա), բ), գ), դ) պարբերությունների» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 536-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 30.07.2015 թվականին ուժի մեջ մտած թիվ 89-Ն օրենքով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածում կատարված փոփոխությամբ և լրացումներով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համայնքի ղեկավարը շենքերի, շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ընդլայնման ու բարեկարգման) կառուցման ավարտը փաստագրում է շինարարության ավարտական ակտով՝ տվյալ օբյեկտի շինարարության թույլտվության համար հիմք հանդիսացող հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո, իսկ նշված շինարարական աշխատանքներն ավարտվելուց և հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված այլ աշխատանքներն իրականացվելուց հետո՝ օբյեկտի շահագործումն ընդունում է շահագործման թույլտվությամբ՝ տալով շահագործման թույլտվություն:

«Տեղական տուրքերի և վճարների» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 30.07.2015 թվականին ուժի մեջ մտած թիվ 94-Ն օրենքով «Տեղական տուրքերի և վճարների» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի «ա» կետում կատարվել է համապատասխան փոփոխություն, որով սահմանվել է, որ շինարարության ավարտական ակտի ձևակերպման, ինչպես նաև շահագործման թույլտվության տրամադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պետք է վճարվի համապատասխան տեղական վճար:

Ելնելով վերը նշվածից և հաշվի առնելով, որ «Տեղական տուրքերի և վճարների» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ուժով Երևանի քաղաքային համայնքում տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու լիազորությունը վերապահված է Երևան քաղաքի ավագանուն, իսկ Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքային համայնքում տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 536-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 90-Ն որոշմամբ շահագործման թույլտվություն տրամադրելու համար տեղական վճար սահմանված չէ, ուստի սույն նախագծով առաջարկվում է շահագործման թույլտվություն տրամադրելու համար սահմանել տեղական վճար՝ ապահովելով օրենքի պահանջը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 536-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքային համայնքում տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 536-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 90-Ն որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 536-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքային համայնքում տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 536-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 90-Ն որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ